


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2014 թվականի ապրիլին


(վերլուծություն)

2014 թվականի ապրիլին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 18678 գործարք, որոնց քանակը 2014 թվականի մարտի համեմատ աճել է 3.9 %-ով, իսկ 2013 թվականի ապրիլի համեմատ՝ 18.0 %-ով:

2014 թվականի ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2014 թվականի ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2014 թվականի ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4405 օտարման գործարքների 76.5 %-ը կազմել է առուվաճառքը, 22.7 %-ը՝ նվիրատվությունը և 0.8 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 43.2 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 41.0 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2014 թվականի ապրիլին, 2014 թվականի մարտի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 0.1 %-ով, իսկ 2013 թվականի ապրիլի համեմատ՝ 9.9 %-ով:

2014 թվականի ապրիլին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 62.1 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2014 թվականի ապրիլին, 2014 թվականի մարտի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 6.9 %-ով, իսկ 2013 թվականի ապրիլի համեմատ՝ 18.9 %-ով:

2014 թվականի ապրիլին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	ապրիլ 2013 թ.	ապրիլ 2014 թ.	մարտ 2014 թ.
Կենտրոն	428000	428000	428000
Արաբկիր	355500	356600	356600
Քանաքեռ-Զեյթուն	282200	282700	282700
Նոր Նորք	250000	252500	252300
Ավան	258050	260200	260200
Էրեբունի	248200	250600	250600
Շենգավիթ	254000	256100	256100
Դավթաշեն	273500	275150	275150
Աջափնյակ	246500	249600	249400
Մալաթիա-Սեբաստիա	238550	242000	242000
Նուբարաշեն	151000	155100	154900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի ապրիլին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2013 թվականի ապրիլի համեմատ աճել են 0.02%-ով:

2014 թվականի ապրիլին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 409 բնակարան, որոնց քանակը, 2014 թվականի մարտի համեմատ, նվազել է 1.2 %-ով, իսկ 2013 թվականի ապրիլի համեմատ աճել՝ 23.6 %-ով:

2014 թվականի ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով,

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		ապրիլ 2013 թ.	ապրիլ 2014 թ.	մարտ 2014 թ.
Արագածոտն	Աշտարակ	114800	115800	115600
	Ապարան	56550	57450	57450
	Թալին	64000	65850	65500
Արարատ	Արտաշատ	94800	96000	95500
	Մասիս	115000	115000	115000

	Վեղի	99300	100500	100300
	Արարատ	75100	75400	75300
Արմավիր	Վաղարշապատ	154000	154150	154150
	Արմավիր	121000	121200	121200
	Մեծամոր	87500	87500	87500
Գեղարքունիք	Սևան	99150	99200	99200
	Գավառ	59000	59800	59800
	Մարտունի	107600	107650	107650
	Վարդենիս	44300	44800	44800
	Ճամբարակ	27500	28700	28700
Լոռի	Վանաձոր	88300	88400	88400
	Ստեփանավան	74500	74500	74500
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	55000	55000	55000
	Տաշիր	47000	47300	47300
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20000	20200	20200
Կոտայք	Աբովյան	154000	155100	155100
	Նոր Հաճն	128500	128600	128600
	Բյուրեղավան	108100	108150	108150
	Եղվարդ	109300	109400	109400
	Հրազդան	63800	63800	63800
	Ծաղկաձոր	292500	292500	292500
	Չարենցավան	85500	85500	85500
Շիրակ	Գյումրի	109300	109300	109300
	Արթիկ	66300	66700	66700
	Մարալիկ	40100	40700	40700
Սյունիք	Գորիս	121000	122000	121900
	Կապան	92100	92500	92300
	Սիսիան	91100	91150	91150
	Մեղրի	80050	80900	80850
	Ագարակ	46000	46900	46900
	Քաջարան	94300	94650	94650
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	94600	95000	95000
	Եղեգնաձոր	122500	125500	125000
	Ջերմուկ	112050	112900	112700
Տավուշ	Դիլիջան	112000	113150	113150
	Իջևան	118100	118300	118300
	Բերդ	60000	60200	60200
	Նոյեմբերյան	49100	49900	49900
	Այրում	31500	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013 թվականի ապրիլի համեմատ աճել են 0.1%-ով:

2014 թվականի ապրիլին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 442 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 121 գործարք, մարզերում՝ 321 գործարք: 2014 թվականի ապրիլին, 2014 թվականի մարտի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 3.3 %-ով, ընդ որում, Երևանում 2.4 %-ով, իսկ մարզերում՝ 3.6 %-ով: 2014 թվականի ապրիլին 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 7.5 %-ով, ընդ որում, Երևանում 39.1 %-ով, իսկ մարզերում նվազել՝ 0.9 %-ով:

2014 թվականի ապրիլին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	ապրիլ 2013 թ.	ապրիլ 2014 թ.	մարտ 2014 թ.
Կենտրոն	476100	476100	476100
Արաբկիր	383000	383000	383000
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319200	319200
Ավան	270500	270500	270500
Էրեբունի	239500	239500	239500
Շենգավիթ	255000	255000	255000
Դավթաշեն	276000	276000	276000
Աջափնյակ	250050	250050	250050
Մալաթիա-Սեբաստիա	238000	238000	238000
Նուբարաշեն	150500	150500	150500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի ապրիլին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2013 թվականի ապրիլի համեմատ մնացել են անփոփոխ։

2014 թվականի ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		ապրիլ 2013 թ.	ապրիլ 2014 թ.	մարտ 2014 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136200	136200
	Ապարան	60000	60050	60050
	Թալին	69100	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100000	100000
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
Արմավիր	Արարատ	88000	88000	88000
	Վաղարշապատ	153100	153100	153100
Գեղարքունիք	Արմավիր	107000	107000	107000
	Սևան	94800	94800	94800
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96000	96100	96100
	Վարդենիս	41000	41000	41000
Լոռի	Ճամբարակ	31000	31100	31100
	Վանաձոր	100000	100000	100000
	Ստեփանավան	90000	90000	90000
	Սպիտակ	114000	114000	114000
	Ալավերդի	49500	50200	50200
	Տաշիր	51900	51900	51900
Թումանյան	12000	12000	12000	

	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	155800	157000	157000
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82400	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	83000	83000
	Շիրակ	Գյումրի	118500	118500
Արթիկ		63100	63100	63100
Մարալիկ		52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130000	130000
	Կապան	99800	100000	100000
	Սիսիան	96100	96500	96500
	Մեղրի	84500	84500	84500
	Ագարակ	46900	46900	46900
	Դաստակերտ	11610	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90000	90050	90050
	Եղեգնաձոր	116600	116600	116600
	Ջերմուկ	131200	131300	131300
Տավուշ	Դիլիջան	112500	113000	113000
	Իջևան	123100	123200	123200
	Բերդ	60000	60100	60100
	Նոյեմբերյան	48000	48300	48300
	Այրում	36000	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2013 թվականի ապրիլի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2014 թվականի ապրիլին հանրապետությունում օտարվել է 1354 միավոր (1523.41 հա) հող, որից Երևանում՝ 159 միավոր (8.74 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 669 միավոր (504.59 հա), որից Երևանում՝ 5 միավոր (0.66 հա),
- բնակելի կառուցապատման հողեր՝ 418 միավոր (34.67 հա), որից Երևանում՝ 75 միավոր (3.41 հա),
- հասարակական կառուցապատման հողեր՝ 167 միավոր (8.11 հա), որից Երևանում՝ 74 միավոր (4.47 հա),
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 17 միավոր (3.48 հա), որից Երևանում՝ 5 միավոր (0.20 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 6 միավոր (18.51 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 77 միավոր (954.05 հա) ընդհանուր մակերեսով:

2014 թվականի ապրիլին հանրապետությունում օտարված հողերից 1153 միավորի (1454.58 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 143 միավոր (7.52 հա), նվիրատվության գործարքներ՝ 193 միավորի (66.86 հա), որից Երևանում՝ 15 միավոր (1.17 հա) և փոխանակության գործարքներ՝ 8 միավորի (1.97 հա), որից Երևանում՝ 1 միավոր (0.05 հա):

Հանրապետությունում 2014 թվականի ապրիլին, 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է

4.4 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 5.1 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 7.9 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 21.4 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Սյունիքի մարզում՝ 964.12 հա, որից 10.99 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 25.8 %-ը կամ 298 միավորը (78.23 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 57 միավոր (1.79 հա), իսկ 72.6 %-ը կամ 837 միավորը (441.31 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 86 միավոր (5.73 հա): 2014 թվականի ապրիլին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 18 գործարք (935.04 հա):

Ստորև ներկայացվում է 2014 թվականի ապրիլին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	
Երևան	0	0.00	4	0.12	20	0.72	33	0.95	3	0.16	1	0.08	47	2.27	35	3.22
Արագածոտն	13	9.80	0	0.00	1	0.07	0	0.00	52	29.36	0	0.00	24	2.62	1	0.003
Արարատ	5	5.26	1	0.02	13	0.60	4	0.55	77	42.73	1	0.03	38	3.61	1	0.005
Արմավիր	1	4.24	1	0.44	1	0.003	1	0.01	86	96.05	0	0.00	38	4.08	1	0.004
Գեղարքունիք	6	17.36	0	0.00	8	0.43	18	0.63	21	16.30	0	0.00	15	1.67	2	0.01
Լոռի	1	0.50	0	0.00	9	0.20	11	0.09	51	41.69	2	0.95	16	2.31	2	0.01
Կոտայք	26	28.20	1	0.01	19	0.95	10	0.17	105	68.45	2	1.00	51	3.93	7	0.37
Շիրակ	2	3.56	0	0.00	3	0.05	0	0.00	34	58.54	0	0.00	15	1.64	2	0.03
Սյունիք	0	0.00	2	0.11	0	0.00	1	0.09	15	10.99	0	0.00	3	0.24	2	0.03
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	3	0.17	0	0.00	15	3.56	0	0.00	3	0.42	3	0.04
Տավուշ	2	0.74	0	0.00	7	0.42	5	0.07	41	10.08	2	0.73	6	0.56	6	1.12
Ընդամենը	56	69.66	9	0.70	84	3.61	83	2.56	500	377.91	8	2.79	256	23.35	62	4.84

Ստորև ներկայացված է 2014 թվականի ապրիլին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Գյուղ. նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	39	0.83	4	0.12	15	0.37	20	0.34	18	0.97	0	0.00	0	0.00	5	0.36	13	0.61
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	12	8.86	11	8.79	0	0.00	1	0.07	0	0.00
Արարատ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	21	5.58	3	4.41	1	0.02	13	0.60	4	0.55
Արմավիր	1	0.003	0	0.00	1	0.003	0	0.00	3	4.69	1	4.24	1	0.44	0	0.00	1	0.01
Գեղարքունիք	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	31	18.42	6	17.36	0	0.00	8	0.43	17	0.63
Լոռի	2	0.011	0	0.00	1	0.01	1	0.001	19	0.78	1	0.50	0	0.00	8	0.19	10	0.09
Կոտայք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	56	29.33	26	28.20	1	0.01	19	0.95	10	0.17
Շիրակ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	5	3.61	2	3.56	0	0.00	3	0.05	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	3	0.20	0	0.00	2	0.11	0	0.00	1	0.09
Վայոց ձոր	1	0.02	0	0.00	1	0.02	0	0.00	2	0.15	0	0.00	0	0.00	2	0.15	0	0.00
Տավուշ	2	0.006	0	0.00	1	0.004	1	0.002	12	1.23	2	0.74	0	0.00	6	0.42	4	0.07
Ընդամենը	46	0.87	4	0.12	19	0.41	23	0.35	182	73.82	52	67.80	5	0.58	65	3.22	60	2.22

2014 թվականի ապրիլին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 4 գործարք (1.87 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2014 թվականի ապրիլին, 2013 թվականի ապրիլի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 36.8 %-ով: Ընդ որում, Երևանում աճել է 28.6 %-ով, իսկ մարզերում՝ 37.7 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 85.7 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 32.7 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 15.4 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 66.7 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014 թվականի ապրիլին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	7	5.17	36.8	173.9	83.8	37	11.40	365.0	12000.0	3496.5
Ապարան						1	0.38	86.5	2727.3	705.0
Թալին	4	3.62	64.7	192.5	123.9	7	6.32	93.6	5494.5	715.0
Ծաղկահովիտ						7	11.26	79.5	1000.0	302.5
Արարատի մարզ										
Արտաշատ	1	1.20	4505.1	4505.1	4505.1	46	22.45	335.1	10833.3	2602.5
Մասիս	1	2.02	195.8	195.8	195.8	14	12.91	200.0	11904.8	2900.0
Վեդի	1	1.19	71.3	71.3	71.3	16	7.30	207.0	10795.1	1800.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	4.24	65.7	65.7	65.7	46	27.12	294.3	9090.0	1227.1
Բաղրամյան						9	46.83	90.6	2561.1	807.5

Վաղարշապատ						27	19.77	444.4	11764.7	2081.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	1.32	199.8	1875.0	432.2
Ճամբարակ								60.5	953.3	355.2
Մարտունի						11	1.19	51.1	2850.0	763.5
Սևան								52.2	2134.8	328.5
Վարդենիս	6	17.36	331.7	418.0	367.0	6	13.79	41.2	2575.1	400.0
Լոռու մարզ										
Ալավերդի	1	0.50	456.5	456.5	456.5	6	0.60	170.4	6424.2	582.3
Գուգարք						21	4.11	234.6	6065.9	808.6
Սպիտակ						1	0.20	250.0	5555.5	720.0
Ստեփանավան						7	6.06	90.6	1686.6	345.4
Տաշիր						16	30.72	45.3	1384.4	178.2
Կոտայքի մարզ										
Աբովյան	9	1.69	246.4	6660.3	1130.3	56	26.74	279.3	11942.7	3957.2
Եղվարդ	17	26.51	72.3	1458.6	442.1	43	36.00	174.4	11971.8	2400.0
Հրազդան						5	5.55	130.5	10256.4	1375.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						10	11.09	252.0	1693.1	655.7
Ամասիա	2	3.56	132.0	187.0	159.5	10	23.94	40.9	261.0	128.0
Անի						7	17.64	110.6	546.9	419.7
Աշոցք								58.5	215.8	134.2
Արթիկ						7	5.87	79.4	1428.6	452.0
Սյունիքի մարզ										
Գորիս						1	0.38	92.6	1023.2	742.5
Կապան								120.0	841.6	375.5
Մեղրի						6	3.83	193.0	3000.0	748.3
Սիսիան						8	6.78	46.3	1977.4	552.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						4	1.42	125.0	10000.0	1950.0
Վայք						11	2.13	58.8	1430.7	655.5
Տավուշի մարզ										
Բերդ						20	5.16	213.3	3783.8	690.0
Իջևան	2	0.74	444.7	444.7	444.7	4	0.83	267.5	9454.5	1275.8
Նոյեմբերյան						17	4.09	46.7	7368.4	940.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014 թվականի ապրիլին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Մտավելագույն	Միջին			Նվազագույն	Մտավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	694.0	2320.7	2320.7	2320.7	19	18315.7	130.7	22200.0	2583.1
Ապարան						4	5752.0	124.1	609.6	390.0
Թային								63.2	1454.8	152.3
Ծաղկահովիտ								60.0	214.3	93.0
Արարատի մարզ										
Արտաշատ	1	1846.2	413.1	413.1	413.1	12	10809.0	173.9	7140.3	903.2
Մասիս	9	725.2	2990.0	3773.3	3230.0	17	14199.0	187.5	25000.0	1226.2

Վեդի	3	3449.6	97.2	1352.9	760.0	7	8751.4	126.1	5000.0	663.7
Արմավիրի մարզ										
Արմավիր						18	21419.5	131.6	9090.9	1216.0
Բաղրամյան						1	1200.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						19	18209.0	197.4	26528.4	1532.3
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						2	1572.0	186.6	1084.3	684.3
Ճամբարակ	1	34.1	293.3	293.3	293.3			71.3	2286.2	148.1
Մարտունի	3	2740.5	188.1	188.1	188.1	11	11333.6	119.3	5000.0	288.7
Սևան	3	1207.8	372.6	776.3	507.2	1	1900.0	240.0	3110.4	325.0
Վարդենիս	1	292.5	66.0	66.0	66.0	1	1870.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի						3	7151.2	114.3	1388.9	217.0
Գուգարք	6	694.9	2300.0	5203.3	3360.9	5	3543.0	77.9	14083.3	1263.6
Սպիտակ	2	1213.0	266.7	268.3	267.5	3	6866.0	104.9	1348.3	207.3
Ստեփանավան						5	5513.5	88.2	1666.7	175.5
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	17	7847.2	310.0	5656.1	2678.2	20	18470.8	264.5	35353.5	2015.5
Եղվարդ	2	1700.0	2488.2	4437.5	3462.9	29	19432.1	173.6	27000.0	2880.0
Հրազդան								117.7	34848.5	1320.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	3	504.1	1945.9	6017.8	4487.9	8	5595.0	113.6	18750.0	335.7
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի						1	3910.0	67.9	180.6	183.0
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ						6	6928.6	111.8	5000.0	218.2
Սյունիքի մարզ										
Գորիս						2	1720.0	112.2	1700.0	369.1
Կապան								67.9	2638.9	313.0
Մեղրի								68.5	632.9	222.5
Սիսիան						1	720.0	123.5	875.0	223.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						3	4163.3	96.7	7659.6	510.0
Վայք	2	1549.6	850.8	852.5	851.6			120.7	1448.3	238.5
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	121.5
Իջևան	5	3400.8	1428.3	1500.0	1467.5	6	5647.0	74.1	14423.1	530.0
Նոյեմբերյան	1	793.7	159.4	159.4	159.4			125.0	1948.1	230.0

2014 թվականի ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 683 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.7 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 68.8 %-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2014 թվականի ապրիլին, 2014 թվականի մարտի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 10.7 %-ով, իսկ 2013 թվականի ապրիլի համեմատ՝ 6.9 %-ով:

2014 թվականի ապրիլին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 48 բնակարանի, 82 անհատական բնակելի տան, 336 հասարակական, 78 արտադրական նշանակության օբյեկտի, 129 հողի և 10 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2014 թվականի ապրիլին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 8 վարձակալության գործարքի քանակը 2014 թվականի մարտի համեմատ նվազել է 11.1 %-ով, իսկ 2013 թվականի ապրիլի համեմատ՝ մնացել է անփոփոխ: 2014 թվականի ապրիլին հանրապետությունում վարձակալված 270.16 հա հողերից 6.80 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում

վարձակալված 263.36 հա հողերից 219.76 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 39.87 հա արդյունաբերական օբյեկտների, 0.02 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 121.92 հա, որից 90.13 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2437 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13.1 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2014 թվականի մարտի համեմատ, աճել է 2.7 %-ով, իսկ 2013 թվականի ապրիլի համեմատ՝ 15.0 %-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (53.2 %), անհատական բնակելի տների (25.0 %), հասարակական նշանակության օբյեկտների (9.6 %) և հողերի (7.7 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1374 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2014 թվականի մարտի համեմատ աճել է 6.1 %-ով, իսկ 2013 թվականի ապրիլի համեմատ՝ 22.8 %-ով:

2014 թվականի ապրիլին հանրապետությունում գրավադրվել է 137.54 հա հող, որից 5.56 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 90.3 %-ը կամ 124.22 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.47 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 50.44 հա, որից 49.91 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի ապրիլին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 238 գործարք: 2014 թվականի ապրիլին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը 2014 թվականի մարտի համեմատ աճել է 57.6 %-ով, իսկ 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 47.8 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 143 գործարք, որը 2014 թվականի մարտի համեմատ աճել է 34.9 %-ով, իսկ 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 19.2 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը 2014 թվականի մարտի համեմատ աճել է 2.1 անգամ, իսկ 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 2.3 անգամ:

2014 թվականի ապրիլին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 1996 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը 2014 թվականի մարտի համեմատ նվազել է 9.6 %-ով, իսկ 2013 թվականի ապրիլի համեմատ՝ 11.9 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 10.7 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (18.4 %):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե